№ 139 Յուլիսի 30 (Օգոստոսի 11) 1881 Յուլիսի 30 (Օգոստոսի 11) № 139

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրագրացիր սիրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ

ԿԷՍ ՏԱՐՈՎ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թուի, մինչև յունվարի 1-ը 1882 թուի։

Բաժանորդութեան գինը 6 բուբլ է։ Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція „Мшакъ"

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Կարակուրտից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Порядокъ» լրագրի թղթակցութիւն։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Զինական մի Սողոմոն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Յուլիսի 3-ին

Հայ ուսանողութիւնը բաժանված է գլխաւորապէս երկու կենտրոնի. Մոսկվայում և Պետերբուրգում։ Սա շատ անյարմար և անբաղդ հանգամանք է, որ հայ ուսանողը այսքան հեռու է այն հայրենիքից, այն հասարակութենից, որի մէջ նա մինչև համալսարանական կեանքը աճել է, կրթվել է, որի կեանքով ապրել է։ Ամբողջ 4—5—6 տարի հասարակութեան և երիտասարդութեան մէջ կտրված են կապերը և այն այնպիսի մի միջոցում, որ այդ կապերը ամենահարկաւոր են։ Սրա հետեւանքն այն է, ինչ որ այժմ տեսնում ենք. բարձր ուսում ստացած հայերը ըստ մեծի մասին մինչև այժմ չեն արդարացրել այն յոյսերը, որ դրել էր նրանց վրա մեր հասարակութիւնը իր ժամանակին։ Սա մէկ ծանրակշիռ և հետաքրքիր հարց է, որը մանրամասնաբար կարողացածիս չափ կը մշակեմ յետոյ. իսկ հիմա դա ինձ հարկաւոր է մէկ նկատողութեան համար։—

Ինչպիսի գործիչներ դուրս կը գան այժմեան ուսանողներից,—դա ապագան ցոյց կը տայ. այժմ մենք միայն այն կարող ենք անել, որ օգուտ կը քաղենք անցեալի սխալներից, որ ապագայում ես չը հանդիպենք նոյն ցաւալի հետեւանքներին։ Ցայտնի հոգեբանական օրէնք է, որ մարդս աւելի այն բանն է սիրում, որ լաւ է ճանաչում, որին լաւ հմուտ է։ Օրինակներ. միջնակարգ ուսումնարաններում միշտ կարելի է նկատել, որ մէկ աշակերտ թուաբանութիւնն է սիրում, միւսը լեզուները և այլն։ Եթէ նայենք նրանց ամենական թուանշաններին, կարող ենք նկատել, որ ամենաբարձր բալերը այն առարկաներից են ստացած, որոնք որ նրանց աւելի սիրելի են։ Ես չեմ կարող սիրել այն օրիորդին, որի երեսը չեմ տեսել, կամ երեսը տեսել եմ, իսկ հետը չեմ խօսացել, կամ հետը խօսացել եմ, բայց լաւ չեմ ճանաչել. ես այստեղ խօսում եմ գիտակցական սէրի վրա, ի հարկէ կան շատ անհատներ որ այս օրէնքին հակառակ օրինակ են ներկայացնում։ Այժմ եթէ օրիորդի տեղ հայրենիքը դնենք, մեր ուսանողութեանը պէտք է բաժանել երեք կարգի. ա. որ իր հայրենիքի երեսը չէ տեսել (փոքրամասնութիւն), բ. որ հայրենիքի, հայութեան երեսը տեսել է, բայց հետը խօսացած չէ (մեծամասնութիւն), գ. որ հետը խօսացած է, բայց լաւ չէ ճանաչում (չնչին փոքրամասնութիւն)։ Ես չը գիտեմ այնպիսի ուսանողի, որ իր հայրենիքը, հայութիւնը լաւ ճանաչելիս լինի։ Դասածիցս պարզ երևում է որ ընդհանրապէս հայ ուսանողի հայրենասիրութեան աստիճանը շատ ցածր է *)։ Այժմ. ինչ միջոցներ ունի հայ ուսանողը իր երկիրը ճանաչելու համար. պատասխանը միայն է. «ոչինչ միջոցներ»։ Միջնակարգ ուսումնարաններում նրան չեն ծանօթացնում իր ազգի անցեալի և ներկայի հետ, նրան չեն սովորացնում իր մայրենի լեզուն. իսկ ինքն աշակերտը այնքան զարգացած չէ լինում, որ հասկանայ դրանց կարեւորութիւնը և ինքը պարապի։ Վրա է հասնում համալսարանական կեանքը, կեանքի այն էպոքը, երբ երիտասարդը առհասարակ առաջին անգամն է աչքը բանում, երբ նա սկսում է առաջին անգամ հետաքրքրվել շրջակայ կեանքով, երբ նոր է սկսում նա տեղ պտրել իր համար կեանքի հոսանքի մէջ և դժբաղդաբար, դէս ու դէն ընկնելուց յետոյ, տեսնում է որ՝ շուրջը ոչ հայութիւն կայ, ոչ հայութեան արձագանք։ Եւ նա կամ ընկնում է ուրիշ կեանքի հոսանք, կամ մնում է որ և է հոսանքից դուրս։ Իրաւացի է մի կողմով ուսանողի պատասխանը, թէ հայրենիքից հեռու է և գործելու միջոցներ չունի, երբ ներկայացնում ես նրան ազգի պահանջները։ Հայութեան յիշեալ արձագանքը, գործելու միջոցները կարող են և պէտք է լինեն հարկաւոր։ Ես ինձ համար գրքերը և հրատարակութիւնները, որոնք պէտք է լինեն այն ամեն տեղ, ուր միայն կայ հայ ուսանողութիւն։—

Հրաւիրում եմ այս հանգամանքի վրա ամեն հայ հեղինակի, աշխատասիրողի, հրատարակչի խորին ուշադրութիւնը. գործը պարզ և հասկանալի է, հարցը ծանրակշիռ։ Մոսկվայի և Պետերբուրգի հայ հասարակութիւններն էլ պիտի մտածեն սրա վրա. նրանք պէտք է բանան, հիմնարկեն գրադարաններ իրենց եկեղեցիների մօտ (читальня при церкви) իրենց հսկողութեան տակ։ Իսկ այժմ դիմելով հայ հեղինակներին, աշխատասիրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին, ցանկա Հայաստանի և Վենետիկի նմանապէս, կրկին խնդրում եմ այս հարցին հարկաւոր ուշադրութիւն դարձնել և իրենց արդած և տպելու գրքերից մէկ-մէկ կամ երկու-երկու ուղարկեն։ Ցանեցէք, որ հնձէք տուէք, որ պահանջէք։ Այստեղ մասնաւորապէս դիմում եմ «Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեանը» և խնդրում եմ իր հրատարակութիւններից կարողացածին չափ ուղարկել. հաւատացէք, պարոնայք, որ ուսանողները անգոհունակ չեն հանդիսանայ և իրենց աշխատասիրութիւններով կօգնեն ձեզ։ Շնորհակալութեամբ կը ստացվեն հին և առհասարակ ամեն տեսակ գրքեր և կարելի է ուղարկել հետեւեալ հասցէով. Въ Москву. Въ университетъ, студ. Ник. Т. Кеворкову։ Իսկ արտասահմանից այսպէս. Russie Moscou, etudiant de l'universite N. Ter—Kevorkoff։

Մինչև այժմ մեծ շնորհակալութեամբ ստացված են հետեւեալ գրքերը. պ. Ս. Շահազիզեանի «Հրապարակախօս ձայնը» 2 օրինակ, պ. Բաֆֆիի «Խենթը» 2 օրին. և «Դաւիթ բէկը» 2 օրինակ, պ. Զ. Սահրեանի «Փարոս Հայաստանի» 1880 թուի 2 համարը, պ. Յ. Ամատունեանի «Երևանի նահանգի բուսականութիւնը» 1 օրին։ Իսկ ստացվում են «Մշակ», «Փարոս Հայաստանի» և «Кавказскій Курьеръ» հրատարակութիւնները։—

Ն. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

23 յունիսի

Մեր քաղաքի չուկան ամենախայտառակ դրութեան մէջ է, և ոչ ոք չը կայ, որ մտածէ և հոգայ հիմնաւոր, կանոնաւոր կարգ մտցնել նրա մէջ, որպէս զի վերջանան նորանում տիրապետող անկարգութիւնները։ Մաղրաբաղները իրանց անխիղճ արարքով զզուացրել են ոչ միայն մեզ, քաղաքացիներիս, այլ մինչև անգամ սարի քրդին ու ձորերի թարաքամներին ևս, որոնք միանգամ միայն տեսնելով Ալէքսանդրապօլի չուկայի, բազարի երեսը, քիչ է մնում երդվեն այլ ևս ոտք չը դնել մեր քաղաքը և չը բերել վաճառելու մի գրուանքայ իւղ, մի պուդ պանիր կամ մի վարունգ անգամ։ Եւ կարելի է ասել, որ եթէ այդ դրութիւնը երկար չարունակվի, վերջապէս բանը կարող է հասնել այն տեղը, որ իր ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար մի քանի պուդ ալիւր, իւղ, պանիր կամ մի քանի տասնեակ ձու գնելու հարկաւորութիւն զգացողը պէտք է ձին թամքի ու գնայ ընկնի գիւղերը իր խնդրած ուտեստը, պաչարը ճարելու։—Մաղրաբաղները թէ մեր հասարակութեան, թէ գիւղացու և թէ քրդի ու թարաքամի հոգեհաններն են։ Դրանք մի քանի խումբ անգործ, անարուեստ մարդիկ են, որոնք առաւօտեան արշալուսի հետ ծագում են հրապարակի վրա և ամեն մի ուտեստի պաչար խլում են գիւղացու ձեռքից, ծեծելով, հայհոյելով և ամեն մի կերպ խաբելով։ Եթէ ձեռքերն ընկաւ մի միամիտ, յիմար թարաքամայ, ճանճի պէս հաւաքվում են գլխին, և խօսելով, լեզուակռիւ անելով, հայհոյելով այնքան են չարչարում խեղճին, որ նա ստիպված է լինում ամենաանչնչին գնով ծախել իր ապրանքը և անիծելով փախչել մեր Սողոմից, իսկ եթէ այդ թարաքամն մի քիչ իրան ասածի մարդ է լինում, վերոյիշեալ հնարները գործ դնելուց յետոյ մեր Հերքիւլէսները այնպիսի բռունցքներ են իջեցնում թարաքամի գլխին, որ խեղճի գլուխը խրվում է մինչև դունչը իրան ահագին փափախի մէջ, և այդ ժամանակ սրիկայ մաղրաբաղները փախցնում են նրա բերած իւղն ու պանիրը, կամ բուրդն ու կաշին։ Մաղրաբաղները այդքանով էլ չեն բաւականանում. մօտերումս էլ սկսել են առաւօտ և երեկոյ դուրս գալ քաղաքից և գնալ քաղաք մտնող ճանապարհների վրա խումբ-խումբ բազմել. Ասուած չանէ, որ այդ միջոցին գիւղացին կամ թարաքամն նրանց պատահի. լաւ խէր կը տեսնեն իրանց բերած իւղ ու պանրից, ցորենից ու ալիւրից, եթէ գիւղացին կամ թարաքամն չը համաձայնեն նրանց կամեցած գնով, այն էլ առանց կշռի տալու, մաղրաբաղները պատրաստ են նոյն րոպէում հասկացնել խղճալիներին, թէ ինչ է նշանակում իրանց կամքը չը կատարել. ձեռքերին ունեցած անագին մահակներով, կոպալներով նրանց կողն ու կուշտը դեռ մի լաւ կը դրստեն, յետոյ էլի իրանց սիրտն ուզած գնով խեղճերի ապրանքը կը տանեն։ Այդ կերպով ձեռք բերած նիւթերը նոր կը բերեն քաղաք և նրանց գինը տասնապատկելով կը ծախեն հասարակութեան վրա. քաղաքի բնակիչներն էլ ստիպված պէտք է դրանցից գնեն։ Ինչպէս ասացի, մեր չուկան ամենախայտառակ դրութեան մէջ է, ոչ ոք չը կայ, որ մտածէ, հոգայ հիմնաւոր, կանոնաւոր կարգ մտցնել նրա մէջ, որպէս զի վերջանան նորանում տիրապետող անկարգութիւնները։ Մաղրաբաղները իրանց անխիղճ արարքով զզուացրել են ոչ միայն մեզ, քաղաքացիներիս, այլ մինչև անգամ սարի քրդին ու ձորերի թարաքամներին ևս, որոնք միանգամ միայն տեսնելով Ալէքսանդրապօլի չուկայի, բազարի երեսը, քիչ է մնում երդվեն այլ ևս ոտք չը դնել մեր քաղաքը և չը բերել վաճառելու մի գրուանքայ իւղ, մի պուդ պանիր կամ մի վարունգ անգամ։ Եւ կարելի է ասել, որ եթէ այդ դրութիւնը երկար չարունակվի, վերջապէս բանը կարող է հասնել այն տեղը, որ իր ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար մի քանի պուդ ալիւր, իւղ, պանիր կամ մի քանի տասնեակ ձու գնելու հարկաւորութիւն զգացողը պէտք է ձին թամքի ու գնայ ընկնի գիւղերը իր խնդրած ուտեստը, պաչարը ճարելու։—Մաղրաբաղները թէ մեր հասարակութեան, թէ գիւղացու և թէ քրդի ու թարաքամի հոգեհաններն են։ Դրանք մի քանի խումբ անգործ, անարուեստ մարդիկ են, որոնք առաւօտեան արշալուսի հետ ծագում են հրապարակի վրա և ամեն մի ուտեստի պաչար խլում են գիւղացու ձեռքից, ծեծելով, հայհոյելով և ամեն մի կերպ խաբելով։ Եթէ ձեռքերն ընկաւ մի միամիտ, յիմար թարաքամայ, ճանճի պէս հաւաքվում են գլխին, և խօսելով, լեզուակռիւ անելով, հայհոյելով այնքան են չարչարում խեղճին, որ նա ստիպված է լինում ամենաանչնչին գնով ծախել իր ապրանքը և անիծելով փախչել մեր Սողոմից, իսկ եթէ այդ թարաքամն մի քիչ իրան ասածի մարդ է լինում, վերոյիշեալ հնարները գործ դնելուց յետոյ մեր Հերքիւլէսները այնպիսի բռունցքներ են իջեցնում թարաքամի գլխին, որ խեղճի գլուխը խրվում է մինչև դունչը իրան ահագին փափախի մէջ, և այդ ժամանակ սրիկայ մաղրաբաղները փախցնում են նրա բերած իւղն ու պանիրը, կամ բուրդն ու կաշին։ Մաղրաբաղները այդքանով էլ չեն բաւականանում. մօտերումս էլ սկսել են առաւօտ և երեկոյ դուրս գալ քաղաքից և գնալ քաղաք մտնող ճանապարհների վրա խումբ-խումբ բազմել. Ասուած չանէ, որ այդ միջոցին գիւղացին կամ թարաքամն նրանց պատահի. լաւ խէր կը տեսնեն իրանց բերած իւղ ու պանրից, ցորենից ու ալիւրից, եթէ գիւղացին կամ թարաքամն չը համաձայնեն նրանց կամեցած գնով, այն էլ առանց կշռի տալու, մաղրաբաղները պատրաստ են նոյն րոպէում հասկացնել խղճալիներին, թէ ինչ է նշանակում իրանց կամքը չը կատարել. ձեռքերին ունեցած անագին մահակներով, կոպալներով նրանց կողն ու կուշտը դեռ մի լաւ կը դրստեն, յետոյ էլի իրանց սիրտն ուզած գնով խեղճերի ապրանքը կը տանեն։ Այդ կերպով ձեռք բերած նիւթերը նոր կը բերեն քաղաք և նրանց գինը տասնապատկելով կը ծախեն հասարակութեան վրա. քաղաքի բնակիչներն էլ ստիպված պէտք է դրանցից

---

*) Հայրենասիրութիւնը առանց գործի հայրենասիրութիւն չէ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԻՆԱԿԱՆ ՄԻ ՍՈՂՈՄՈՆ

—

Երկամուսնութեան դէպքեր Չինաստանում հազուագիւտ չեն, մերթ ընդ մերթ պատահում են։ Վերջին օրերումս Պեկինի մէջ նոր Սողոմոնի դեր խաղացող չինական մի նախարարի հանճարը տեսնվեց, որ հազուագիւտ տաղանդ լինելով, ըստ ամենայնի արժանի է հրատարակութեան։

Չին-Զան-Զունկ, իր կինը թողնելով Ամերիկա գնացել էր բախտախնդրութեամբ։ Այնտեղ մնաց եօթը օրթը տարի. այս երկար բացակայութեան ժամանակ, իր կինը, որ քնքոյշ ոտներով և կամարաձև յօնքերի ներքև թաւշանման աչքեր ունեցող մի սիրուն չինականուհի էր, ամուսինը մոռած կարծելով վերստին ամուսնացաւ Չի-Հօ-Հանկի հետ։ Բայց մի օր, Չին-Զան-Զունկը յանկարծ Չինաստան վերադառնալով շատ անախորժ մի տպաւորութիւն զգալի եղաւ իրան և զարմացած մնաց, երբ իր կնոջ մօտ տեսաւ Չի-Հօ-Հանկին։

Երկու ամուսինք երկար ժամանակ միմեանց հետ կռուեցան, մաքառեցան, բայց և ոչ մինը չէր ուզում կինը միւսին յանձնել։

Չին-Զան-Զունկը դատաստանին գանգատ արաւ, և երկու հակառակորդք, ընկերակցութեամբ գեղեցիկ տիկնոջ, ներկայացան չինական դատաւորի առաջ։

Նախ և առաջ դատաւորը հարցրեց կնոջ՝ թէ երկու ամուսիններից ում հետ ցանկանում էր ապրել։ Կինը պատասխանեց թէ երկուքն էլ իր օրինաւոր ամուսինները լինելով և ոչ մէկին չէր կարող որոշում տալ, և առաջարկեց դատաւորին, որ ինքը արդարացի մի վճիռ տայ, թէ երկուսից որն է արժանի և թէ ում հետ ապրելը աւելի օրինաւոր էր։

Չինական նախարարը մի քանի վայրկեան խորին մտածութեանց մէջ ընկղմեցաւ. յետոյ գանգակը հնչեցնելով, հրամայեց երկու ամուսիններին, երեք օրից ստանալը գալ ներկայանալ։ Երեք օրը լրանալուց յետոյ Չին-Զան-Զունկ և Չի-Հօ-Հանկ ներկայացան դատաւորի առաջ։

Դատաւորը տխրագին մի դէմքով սրանց ասաց։

—Ա՛հ, պարոններ, կարող էք այժմ գնալ, այլ ևս դատ և գանգատի հարկ չը կայ, գործը ինքնին վերջացաւ։

—Ի՞նչպէս, աղաղակեցին միանգամայն Չին-Զան-Զունկ և Չի-Հօ-Հանկ։

—Այո՛, պարոններ, խեղճ կինը մեռաւ։ Այժմ կարող էք իմանալ թէ գանգատի նիւթը մէջ տեղից վերնալով, հետեւաբար դատն էլ ոչնչացած է։

—Այո՛, ճշմարիտ է, պատասխանեցին երկու ամուսինները և ուզեցան հեռանալ։

—Հա՛, բայց, ներեցէք, ասաց դատաւորը, ուրիշ մի բան էլ կայ։ Այժմ կը մնայ մեզ իմանալ թէ՝ ձեր երկուսից որը պիտի հոգայ թաղման ծախքերը։

Ոչ Չին-Զան-Զունկ և ոչ Չի-Հօ-Հանկ այս եղրակացութեան չէին սպասում։

—Ա՛հ, ասաց առաջինը, գալով ինձ, ես ինքս չեմ յանձն առնի, ճշմարիտը խոստովանելով, պարոն դատաւոր, ես ձեզ յայտնում եմ որ շատ դոհ եմ նրան մեռնելուն, որովհետև վատ մի կին էր, և երբէք ինձ երջանիկ չէր արած։

—Պարոն դատաւոր, այդ մասին անհոգ եղէք, ասաց երկրորդ ամուսին Չի-Հօ-Հանկը, ես պատրաստ եմ յուղարկաւորութեան բոլոր ծախքերը հոգալ, որովհետև դա շատ մի բարի կին էր, և նորա մահը ինձ մեծ ցաւ պատճառեց։

Այս խօսքը արտասանած ժամանակը Չի-Հօ-Հանկը, արդէն այտերի վրա կաթած արտասուքը սրբում էր։

—Կինը ձեռն է, բղաւեց դատաւորը ուրախ դէմքով, և կինը ատեան բերել տուաւ, զոր թագցրած էր վարագոյրի ետեւը։

Առէք նրան, Չի-Հօ-Հանկ, դուք էք արժանի ամուսինը, ինչպէս տեսնում էք նա մեռած չէ, այս խորամանկութիւնը ես դիտմամբ հնարեցի տեսնելու համար թէ ձեր երկուսից ով ճշմարիտ սիրով յարգում է իր կնոջը։

Չի-Հօ-Հանկ, իր կենդանի կնոջ ձեռքը բռնած, իսկ Չին-Զան-Զունկ ամօթից գլուխը ծռած դուրս ելան ատեանից։—

***